
ՎԵՐՋԻՆ ՏԱԱԸ ՏԱՐԻՆԵՐԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ-ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԱՅԻՏ ԱԴԻԼԵԱՆՅԱՆ

Վերջին տասնամյակում բավականին մեծ տեղաշարժեր են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում. գիտատեխնիկական առաջընթացը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանը առաջացնում են նոր հասկացություններ, իսկ հասկացությունները պետք է ձեռք բերեն իրենց անվանումները: Տերմինաշինության գործընթացը շարունակվում է գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտների զարգացմանը զուգընթաց:

«Տերմինաբանության մշակման ու հարստացման խնդիրը լեզուների բառապաշարի հարստացման ու կատարելագործման կարևորագույն խնդիրներից մեկն է. առանց հարուստ ու մշակված տերմինաբանության չկա հարուստ ու զարգացած լեզու»¹, - նկատել է ակադ. Էդ. Աղայանը:

Տերմինների առաջացումը պայմանավորված է գիտական որևէ բնագավառն արտահայտող տերմինային հասկացությունների ձևավորմամբ, իսկ տերմինի ընտրությունը կատարվում է համապատասխան մասնագետի կողմից: Ինչպես նշում է պրոֆ. Լ. Եզեկյանը. «Տերմինի գոյությունը պայմանավորված է միայն մասնագիտական հասկացությունները արտահայտելու պահանջով, ուստի և տերմինը ոչ թե հատուկ բառ է, այլ բառ՝ հատուկ գործածությամբ»²: Անշուշտ, նոր տերմինի համար էական նշանակություն է ստանում իմաստային և ձևային հատկանիշը: Այդ իմաստը լիարժեքորեն արտահայտելու համար համապատասխան բառ չունենալու պատճառով ստեղծվում են նոր բառեր, և կամ բառը ստանում է նոր իմաստ՝ դիտվելով նորաբանություն: Այս առիթով Մ. Աբեղյանը նշում է, որ լեզուն տերմինների համար օտար բառեր ընդունելու փոխարեն՝ դրանց տալիս է համապատասխան նշանակություններ՝ արտահայտվելով «բնիկ» բառերով, կամ այլ լեզուների օրինակով նոր բառեր են կազմվում³: Գիտական յուրաքանչյուր բնագավառ ստեղծում է իր տերմինները, որոնք կազմվում են կամ հայերեն արմատներով, կամ օտար բառերի փոխառությամբ և կամ ներքին փոխառությունների հիման վրա: Ներքին փոխառություններ են համարվում տվյալ լեզվի պատմական և գործառական այլ տարբերակներից արված փոխառությունները: Ժամանակակից արևելահայերենի համար ներքին փոխառության աղբյուր են գրաբարը, բարբառները, արևմտահայերենը: Վերջին տարիներին մեծ թվով տերմիններ արևմտահայերենից անցել են արևելահայե-

¹ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 310:

² Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 35:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն / Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 46:

րենին՝ փոխարինելով օտար տերմիններին⁴, ինչպես՝ *ստրատեգիա* – *ռազմավարություն*, *սերտիֆիկատ* – *հավաստագիր*, *ինֆլացիա* – *սղած*, *բրիֆինգ* – *ճեպագրույց* և այլն:

Ժամանակակից տերմինաբանության բնագավառում կատարված փոփոխությունների մեջ նկատելի է երկու հիմնական միտում՝ ա) միջազգային տերմինները փոխարինվել են հայերեն համարժեքներով, և լեզվում ստեղծվել են տերմինային նույնանիշներ, ինչպես՝ *աուդիտ* – *հաշվեստուգում*, *գրանտ* – *դրամաշնորհ*, *գլոբալիզացիա* – *համաշխարհայնացում*, *կոմպլենենտար* – *համահավասար*, բ) փոխվել է արդեն գոյություն ունեցող տերմինների բառակազմությունը՝ հարմարեցվելով նրանց ձեռք բերած նոր իմաստներին, այսպես՝ *ռեկլամա* – **ազդարք** – *գովազդ*, *լիցենզիա* – **թույլտուք** – *թույլատրագիր*, *դեֆիցիտ* – **պակասորդ** – *պակասուրդ* և այլն: Նկատենք, որ վերջին օրինակներում ընդգծված տերմինները արձանագրված են դեռևս Թ. Ավդալբեկյանի բառարանում⁵, սակայն հաշվի առնելով այդ բառերի իմաստային նրբերանգները՝ մասնագետները որոշ կառուցվածքային փոփոխություններ են կատարել՝ մասնավորեցնելով տերմինի իմաստը կամ համապատասխանեցնելով երևույթի բովանդակային կողմին: Այսպես՝ ոչ թե *պետբյուջեի պակասորդ* է գրանցվել, այլ՝ *պակասուրդ*, քանի որ *պակասորդը* կարող է վերաբերել գույքի, փողի պակասին և այլն:

Այսպիսով, վերջին տասնամյակում ստեղծված նորաբանություն-տերմինները ստեղծվել են երեք ճանապարհով՝ ա) լեզվի ներքին հնարավորություններով (դրանք հիմնականում հայերեն արմատներով բառաբարդման եղանակով ստեղծված տերմիններն են կամ փոխառյալ հիմքերով ու հայերենի բառակազմական եղանակով կազմվածները), բ) արտաքին փոխառությունների միջոցով, գ) ներքին փոխառությունների, հատկապես արևմտահայերենի միջոցով:

Ազատ շուկայական հարաբերության ձևավորումը, համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ներգրավումը ինքնին թելադրեցին համապատասխան տեղաշարժեր հատկապես տնտեսագիտական բառապաշարի մեջ: Մյուս բնագավառների բառապաշարը ավելի պահպանողական է և շատ քիչ փոփոխություններ կրեց:

Տերմինային նորակազմությունները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ ա) միջազգային տերմիններ, բ) նորակազմ հայերեն տերմիններ և գ) դիպվածային նորաբանություն-տերմիններ:

Ներկայացնենք վերջին տասնամյակի պարբերական մամուլում և մասնագիտական գրականության մեջ⁶ հանդիպած նորաբանություն-տերմիններն ըստ գործածության հիմնական ոլորտների: Նշենք, որ ցանկերում տվյալ տերմինի նույնանիշները անջատվում են ստորակետերով, անհրաժեշտության դեպքում տրվում է տերմինների բացատրություն՝ չափերտներով, ուղիղ փակագծերում տրվում են հատուկ նշումներ տերմինի

⁴ Տե՛ս **Ռ. Սաքապետոյան**, Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., 2000:

⁵ Տե՛ս **Թ. Ավդալբեկյան**, Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմիններ, Եր., 1964:

⁶ Տե՛ս **Ս. Էլոյան**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002, **Պ. Ավետիսյան**, Ֆինանսաբանկային բացատրական բառարան (անգլերեն-ռուսերեն-հայերեն), Եր., 2002:

ծագման կամ գործառական ակտիվության վերաբերյալ՝ [արևմտ.], [դիպվ.] և այլն:

Մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնելու մասնագիտական հետևյալ նորաբանություն-տերմինները.

տնտեսագիտական

<ol style="list-style-type: none"> 1. ազատականացում 2. առևտրագեղջ 3. առևտրագնում 4. արժեկտրոն 5. արժեմաս 6. արժեորոշում 7. արտաբյուջետային 8. աուկցիոներացում 9. բազմատեսականացում, դի-վերսիֆիկացիա 10. բաժնեծրար 11. բաժնեմաս 12. բաժնեմիջոց 13. բաժնետիրականացում 14. բեռնարգելք, էմբարգո («պետական իշխանության կողմից ապրանքների և նյութական արժեքների՝ որևէ երկրից արտահանելու կամ որևէ երկիր ներմուծելու արգելում») 15. բեռնապահովագրում, կարգո 16. գանձապետարան 17. գերարժեզրկում 18. գերձգնաժամ 19. գնաճ 20. գրանտատու 21. գրավադրում, հիպոթեկ 22. դրամազանգված 23. դրամաշարժ 24. դրամատուն 25. դրոշմավարող 26. ենթակազմակերպչական վարձակալություն, լիզինգ («արտադրական կառույցների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն»), լիզինգային, լիզինգառու 27. երաշխագիր, ավալ («հանձնարարական մակագրություն մուրհակի վրա») 	<ol style="list-style-type: none"> 28. գեղջադրույք, դիսկոնտ («այն տոկոսը, որը բանկը ստանում է մուրհակների և պարտատոմսերի հետ կապված գործարքներից») 29. գեղջատուկոս 30. լրավճար 31. հակասդաճային 32. հաշվանցում 33. հաշվետառ 34. հաշվետուզում, հաշվեքննություն, աուդիտ, աուդիտորական 35. հաշվետուզիչ, հաշվեքննիչ, աուդիտոր («վստահված անձ, որը զբաղվում է ֆիրմայի ֆինանսատնտեսական ոլորտի ստուգմամբ») 36. հավաստագրում [արևմտ.], սերտիֆիկացում, սերտիֆիկացնել 37. հարկաբյուջետային 38. մակնիշում 39. շահույթադրույք 40. շուկայագետ, մարքեթոլոգ 41. պարզևավճար, բոնուս 42. վարկառու 43. վարկավճարունակություն 44. վարկունակ 45. վարձագանձում 46. վերջնահաշվարկ 47. վճարահաշվարկային 48. տնտեսավարող 49. փոխանցում, տրանսֆերտ 50. տոկոսադրույք 51. տրանսֆերային 52. փոխարկ, կոմվերսիա («տվյալ երկրի արժույթի փոխանակումը արտարժույթի») 53. օլիգոպոլիա
--	--

և այլն:

Քաղաքական, դիվանագիտական

<ol style="list-style-type: none"> 1. ամենհինգամենկնաբան [դիպվ.] 2. այլախոհ, դիսիդենտ 3. աշխարհագրոտի [դիպվ.] 4. աշխարհաքաղաքագետ, գեոպոլիտիկ 5. աշխարհաքաղաքականություն 6. աջություն [դիպվ.] 7. առանձնագրույց 8. առձակատվել 9. բախումնաբան, կոնֆլիկտոլոգ 10. բանագնացող [դիպվ.] («բանակցությունների գնացող») 11. բռնավարչական, տոտալիտար գերկոսմոպոլիտիկա 12. դիտորդում, մոնիթորինգ 13. եվրաինտեգրում 14. երեսփոխան [արևմտ.], պատգամավոր 15. կառուցողական, կոնստրուկտիվ 16. համահավասար, կոմպլեմենտար 	<ol style="list-style-type: none"> 17. համաշխարհայնացում, գլոբալիզացիա 18. համաձայնություն, կոնսենսուս 19. հակաձախական [դիպվ.] 20. հետկլորսեղանյան [դիպվ.] 21. մտախառնվածք [արևմտ.] 22. մերժտարածաշրջանային 23. ներգրավում, ինտեգրացիա 24. շահախումբ, լոբբի, լոբբիստ, լոբբիստական («օրենսդրական օրգանների վրա ճնշում գործադրող, լոբբիի բնորոշ») 25. վեհաժողովական [դիպվ.] 26. ցեղասպանածին [դիպվ.] 27. քարոզչամեթոդ [դիպվ.] 28. օրինականացում, լեգիտիմացում <p align="right">և այլն:</p>
--	--

Իրավաբանական

<ol style="list-style-type: none"> 1. անժամանցելի («վաղեմության ժամկետ չունեցող») 2. հանցահարույց 3. հանցագործաբանություն 4. հանցատեսակ 5. հետաքննչություն 	<ol style="list-style-type: none"> 6. հպատակագրություն («գրին քարտ») 7. քրեակատարողական 8. քրեօլիգարխիկ 9. օրինախրավական <p align="right">և այլն:</p>
---	---

Բժշկական

<ol style="list-style-type: none"> 1. աղետամոքսաբան, գաստրոէնտերոլոգ 2. ալերգարբույժ 3. ադիքուղի 4. անասնաճարակային 5. անհիշություն [արևմտ.], ամնեզիա 6. արյունաբանություն [արևմտ.], հեմատոլոգիա 7. բրոնխաբորբ, բրոնխիտ 8. բուժածև 9. բուժաշրջան 10. գենափոխանցում 11. էլեկտրամակարդիչ 12. թմրաբան, անեստեզիոլոգ 13. իմպլանտացիա 14. իմունոդեֆիցիտ 	<ol style="list-style-type: none"> 15. իմունոլերականգնում 16. հակախոցային 17. հակածինային 18. մաշկավեներաբան 19. սերմնացրում, մետաստազ 20. մկանուռուցք, ֆիբրոմա/միոմա 21. ներուղիչ, ստենդ 22. նյարդացունց 23. սովաբուժություն 24. սրտագրություն [արևմտ.], կարդիոգրամա 25. վնասվածքաբանություն, տրավմատոլոգիա 26. ցրտաբուժություն 27. ցրտառական («ցուրտ առնելուն, մրսածությանը բնորոշ») <p align="right">և այլն:</p>
--	--

Երկրաբանական

1. ածխերևակում («ածուխի պաշարների հայտնաբերում»)	6. խտակտոր
2. աղաբույլ	7. խտահանք, կոնցենտրատ
3. գիպսաքար	8. հաստվածք («լեռնային ապարի շերտ»)
4. երկրաջրոլորտ	9. նավթագազահոր
5. խտույթ	10. սողանքաշատ
	և այլն:

Շինարարական

1. ապակերլոկ	6. կամարակիր
2. ավազաշիթային («ավազի շիթի օգնությամբ կատարվող (մաքրում)»)	7. կամրջանեցուկ
3. ավտորետոնախառնիչ	8. կայմածոպան, վանտա
4. եզրակղմինդր	9. հոսքափոխում
5. թաղանթասավան [դիպվ.] («շինհրապարակների ծածկույթ»)	10. ճանապարհաշերտ
	և այլն:

Մարզական

1. դահուկուղյակ	6. մրցալող [դիպվ.]
2. ետնապահ, ստրախովկա	7. մրցակալ, չեմպիոն
3. թափանժույգ	8. մուրճուրդ [սխլ.] («մուրճի նետումով զբաղվող մարզիկ»)
4. խաղամակարդակ	9. վարժասարք, տրենաժոր
5. մարզաշապիկ	և այլն:

Ռազմական

1. հրետակայանք	5. ռազմագլխիկ
2. հրթիռառմբային	6. ռմբահարող
3. հրթիռարձակ	7. ռմբարկ
4. հրկիզախառնուրդ	և այլն:

Արվեստագիտական, կրոնական

1. աստվածաճանաչում	7. թատերացանկ
2. աստվածաորդիություն	8. կերպարարն, իմիջմեյքեր
3. աստվածափնտրում	9. կնճռախաղ [դիպվ.] («լարված, բարդ խաղ»)
4. գուսանագիտական	10. հոգեորսիչ
5. զուռնահար	և այլն:
6. եվրոտեսիլ	

Հայտնի է, որ տերմինի իմաստը ճշգրտորեն պետք է համապատասխանի գիտության տվյալ բնագավառին վերաբերող հասկացություններին, և յուրաքանչյուր հասկացություն պետք է ունենա մեկ բառային ձև:

Ինչպես գիտենք, տերմինները բազմիմաստ չեն կարող լինել, բայց տերմինային համակարգերում հանդիպում են նույնանիշ տերմիններ: Նույնանշությունը հիմնականում առաջանում է օտար բառերի և հայերեն համարժեքների զուգահեռ գործածությամբ, այսինքն՝ օտար տերմինի դիմաց ստեղծվել է հայերեն համարժեքը, որը, սակայն, դեռ լայն ճանաչում չի ստացել, ուստի զուգահեռաբար գործածվում է օտար բառը: Ինչպես՝ *հաշվեստուգում, հաշվեքննություն – աուդիտ, մրցակալ – չեմպիոն, դիտորդում – մոնիթորինգ, այլախոհ – դիսիդենտ, մտազար – մանիակ, մահաթմբիր – կոնա, բեռնարգելք – էմբարգո* և այլն: Կան միջազգային տերմիններ, որոնց նախնական իմաստները փոխվել են: Օրինակ՝ վերջին տասնամյակում շրջանառության մեջ է դրվել *հիպոթեկ* տերմինը: Այն ունի հունարեն ծագում, նշանակում է «գրավ», այսինքն՝ գրավի դիմաց տրվող վարկերը կոչվել են *հիպոթեկային վարկեր*, մինչդեռ այդ տերմինի իմաստը նեղացվել է. ամեն գրավ դեռևս հիպոթեք չէ. միայն բնակարանները, շինությունները կարող են գրավի արժեք ստանալ, և նրանց դիմաց տրվող վարկերն արդեն կոչվում են հիպոթեքային վարկեր:

Այսպիսով, ուսումնասիրությունից պարզվեց, որ տերմինների մեջ կան այնպիսիները, որոնց հայերեն համարժեքները դեռևս սակավ գործածություն ունեն, ինչպես՝ *աուդիտ, գլոբալիզացիա, ինտեգրացիա, մոնիթորինգ, կոնվենցիա, իմունոդեֆիցիտ, իմպլանտացիա* և այլն: Որոշ տերմինների հայերեն համարժեքները կան, ինչպես՝ *աշխարհաքաղաքականություն – գեոպոլիտիկա, շահախումբ – լոբբի, համաձայնագիր – կոնվենցիա, փոխանցում – տրանսֆերտ, օտարահպատակ – ռեզիդենտ* և այլն, բայց դեռևս հայերեն համարժեքները քիչ են գործածվում, կամ երկու տերմիններն էլ միաժամանակ գործածվում են՝ *համահավասար – կոմպլեմենտար, վարձակալություն – լիզինգ, բեռնարգելք – էմբարգո, վնասվածքաբան – տրավմատոլոգ, լրավճար – սուբսիդիա* և այլն: Կան տերմիններ, որոնց հայերեն համարժեքը արևելահայերենում եղել է, բայց արևմտահայերենից փոխառվել է նոր բառ, քանի որ գոյություն ունեցող բառն ամբողջովին չի արտահայտել երևույթի էությունը, օրինակ, *սպիկեր* բառի դիմաց գործածվում է արևմտահայերեն *խոսնակ* բառը, քանի որ արևելահայերեն *հաղորդավար* բառը ավելի ընդհանուր գործածություն ունի և *սպիկեր* բառի համարժեքը չէ:

Սա վկայում է այն մասին, որ բառը նտությունը պետք է կատարվի այնպես, որ թյուրիմացությունների տեղիք չտա, և բառը իր արտահայտած իմաստով ամբողջովին համապատասխանի տվյալ իրողությանը, երևույթին:

Վերջին տասնամյակում ստեղծված նորաբանություն-տերմինների հայերեն համարժեքներից շատերը հաջողությամբ գործածվում են և արդեն աստիճանաբար անցնում են բառապաշարի գործուն շերտ, ինչպես՝ *գանձապետարան, վարկավճարունակ, տնտեսավարող, զեղչատոկոս, վնասվածքաբան, աշխարհաքաղաքականություն, հաշվեքննություն, հոգեորսիչ, թափանցույզ, թատերացանկ, աստվածաճանաչում, կցակառույց, մերսասրահ, ռմբահարող, քրեակատարողական* և այլն: Ունենալով անսովոր կազմություն և սակավ գործածություն՝ նորաբանություն-տերմինների որոշ մասը դեռևս չի ընդունվում հասարակության լայն զանգվածների կողմից և մասամբ հենց տվյալ ոլորտի մասնագետների

կողմից: Օրինակ՝ *չեմպիոնի* փոխարեն ստեղծվել է *մրցակալը* («*Բուլղարացիների կազմում հանդես են գալիս աշխարհի վեց մրցակալ*»:), կամ՝ *հպատակագրություն* («*ԱՄՆ-ի ներգաղթի և հպատակագրության (քաղաքացիություն, գրին քարտ) ծառայության զեկույցներում ասված է...*»): Այլ օրինակներ՝ *կոնֆլիկտաբան* – *բախումնաբան* («*Ես ինձ չհասկացված եմ զգում, երբ շուրջբոլորս տեսնում եմ քաղաքագետներ, կոնֆլիկտաբաններ (հայերենով՝ բախումնաբաններ)*»:) [նամուլ], *դերերգչական* («*Երգով դեր կատարելու արվեստին բնորոշ*») («*Օպերայի ժանրի իմ տեսությունը քաղել եմ իմ դերերգչական արվեստի հայեցակետից*»:) [նամուլ]: Կան նաև անհաջող կազմություններ, ինչպիսին *մուրճուրդ* բառն է, ճիշտը կլիներ *մուրճորդ* (*հմմտ.՝ հեծանվորդ, դահուկորդ*), բայց ստեղծվել է *մուրճուրդ* («*Համամիութենական ռեկորդ սահմանեց նաև մուրճուրդ Ռ. Կլիմը*»:) [նամուլ], անհաջող կազմություն է նաև *բանագնացող* բառը, որտեղ ավելորդ է *-ող* ածանցը, կամ՝ *ներսդիտակ* – *էխտ* (թեպետ *էխտ*-ն բառ չէ, բայց բժշկության բնագավառում հաճախական գործածություն ունի), արևմտահայերենում *ներդիտակ*, որ ավելի ճիշտ կազմություն է:

Անդրադառնանք տերմինների բառակազմությանը: Ուսումնասիրությունից պարզվել է, որ գիտական բոլոր ոլորտների վերաբերող տերմինների կազմության մեջ առավելություն ունեն երկբաղադրիչ կազմությունները:

Նորաբանություն-տերմինները կազմվել են հետևյալ կաղապարներով՝

ա) **հայերեն արմատ+ածանց**՝ (նախածանց կամ վերջածանց, կամ՝ երկուսը միասին) *խտույթ, հաստվածք, մակնիշում, շուկայավարում, աջություն, դիտողական, հակաձախական, համադրիչ, մուրճուրդ* (ճիշտը՝ *մուրճորդ*), *քրեորեն* և այլն,

բ) **հայերեն արմատ+հայերեն արմատ**՝ *զեղչատոկոս, բկաբորբ, աղաբույլ, երկրաջրոլորտ, խտակտոր, աշխարհագոտի, բուժածև, թմրաբան, կասկածախտ, մերսասրահ, առևտրագեղչ, կայմաճուպան, հրթիռարձակ, ռմբարկ, եզրակղմինդր, ճանապարհաչերտ, կամարակիր, թաղանթասավան, արժեմաս, դրամաշարժ, հաշվեառ, լրավճար, թատերացանկ, կնճռախաղ, զուռնահար, մարգաշապիկ, թափանժույզ, վարժասարք, մրցակալ* և այլն,

գ) **հայերեն արմատ+հայերեն արմատ+ածանց**՝ *այլախոհական, անասնաճարակային, առևտրագնում, աստվածաճանաչում, արժեկտրոն, ավազաշիթային, արժեորոշում, բանագնացող, բռնավարչական, բռնարգելք, գուսանագիտական, գերձգնաժամ, դրոշմավարող, հակաստաճային, հանցագործաբանություն, հպատակագրություն, հոսքափոխում, հաշվեքնություն, հրթիռառմբային, հրետակայանք, հրկիզախառնուրդ, վարկավճարունակ, ռազմագլխիկ* և այլն,

դ) **փոխառյալ բառ+հայերեն արմատ կամ ածանց**՝ *ալերգաբույժ, դիվերսիֆիկացնել, ենթասկզիզային, ինտեգրացում* (ճիշտն է՝ *ինտեգրում*), *լեգիտիմացում, լիզինգառու, լիցենզավորում, լոբբիստական, հեղջինգացում, սերտիֆիկացնել, տրանսֆերային, օֆշորային* և այլն:

Ինչպես տեսնում ենք, բաղադրյալ եղանակով ստեղծված տերմինները վկայում են ժամանակակից հայերենի բառակազմական միջոցների լայն հնարավորությունների մասին: Բոլոր դեպքերում օտար բառերը հա-

յերեն համարժեքներով փոխարինելիս չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք. դա ոչ միայն բառ-տերմինի ճշգրտությունն է, այլև հասկանալիությունը տվյալ ոլորտի մասնագետների, ինչպես նաև հասարակության լայն զանգվածների համար:

Այսպիսով, նորաբանություն-տերմինները մեծ տեղ են գրավում արդի հայերենի տերմինաբանական բառապաշարում: Տերմինաշինության գործընթացը շարունակվում է, իսկ նորանոր տերմինների ստեղծումը պայմանավորված է հասարակական կյանքի ու գիտության առաջընթացով և տերմինաբանության զարգացման այսօրվա միտումներով:

АНАИТ АДИЛХАНЫН – Термины-неологизмы последнего десятилетия в современном армянском языке. – За последнее десятилетие в разных сферах общественной жизни произошли значительные изменения. Научно-технический прогресс, информационные технологии порождают новые реалии и понятия. Чтобы адекватно передать их смысл, возникают новые слова или новые значения уже имеющихся слов.

Новая терминология в течение последнего десятилетия создавалась тремя путями:

- а) внутренними словообразовательными средствами языка,
- б) через внешние заимствования,
- в) путём так называемого внутреннего заимствования, т. е. используя соответствующую западноармянскую лексику.

В статье отмечается, что за десять лет словарный запас современного восточноармянского литературного языка значительно пополнился новыми терминологическими образованиями, которые отражают интенсивные перемены в науке, технике и общественной жизни.

АНАИТ АДИЛХАНЫН – Term-Neologims of the past decade in modern Armenian. – A significant number of changes have taken place in different spheres of social life over the past decade. The advance of information technologies and the progress of science have created new concepts that require names. To convey the meaning of these new concepts, new words are created or words that already exist acquire new meanings.

As our research tends to show, over the past decade new terminology units have been created through the following ways:

- a) through word formation resources of the language;
- b) by borrowing from foreign languages;
- c) through the so-called inner borrowings, i.e. by using Western-Armenian loanwords.

The paper notes that over the past decade the word stock of the Eastern Armenian language has been significantly enriched by new terms that reflect the recent advances in technology, science and social life.